ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-ԻՑ ՕԳՈՍՏՈՍԻ 2-Ը ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ (Ք. ՄՈՍԿՎԱ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

Արմեն Սիմոնյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա

4. **Հրավիրող կողմը.**

Հրավերը ստացվել է է ՌԴ «Ռոսատոմ Սերվիս» ԲԸ կողմից

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակցություն Համատեղ կոորդինացիոն կոմիտեի (ՀԿԿ) 3-րդ նիստին

6. **Քննարկված թեմաները.**

Կողմերը քննարկել են Համատեղ կոորդինացիոն կոմիտեի (ՀԿԿ) №2 արձանագրության որոշումների կատարումը, Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի շահագործման ժամկետի կրկնակի երկարացման նախագծի (ՇԺԵ-2) աշխատանքների իրականացման կարգավիճակը 2025 թվականի դրությամբ և ՇԺԵ-2 նախագծի շրջանակներում 2026 թվականին կատարվելիք աշխատանքների վերաբերյալ ծրագրերը (պլանները):

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Խորհրդակցության ընթացքում նշվեց, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հունիսի 23-ի 819-Ա որոշմամբ հաստատվել է Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի ՇԺԵ-2 ակտուալիզացված ծրագիրը՝ միջոցառումների իրականացման նկատմամբ կիրառվող մոտեցումներով և աշխատանքների կատարման ժամկետներով:

Միջոցառման մասնակիցները քննարկեցին ռուս և հայ մասնագետների կողմից կատարված աշխատանքների արդյունքները, ինչպես նաև նախանշեցին կայանի աշխատանքի անվտանգության բարձրացմանն ուղղված հետագա քայլերը: Կողմերը նշեցին նաև, որ համաձայն շրջանակային պայմանագրի, համատեղ ջանքերով ապահովվում է ՀԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի ՇԺԵ-2 նախագծի ընթացիկ աշխատանքների իրականացումը՝ հաստատված ժամանակացույցին համապատասխան: Քննարկվեցին ՀԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի ՇԺԵ-2 նախագծի շրջանակներում միջոցառումների իրականացման 2026 թվականի պլանները, ինչպես նաև համատեղ գործակցության հեռանկարային ուղղություններն ու խնդիրները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

ՀԿԿ 3-րդ նիստի ընթացքում, հաշվի առնելով կայացած քննարկումները, ընդունվել են ստորև բերված որոշումները.

1. Մինչև 2025թ. սեպտեմբերի 15-ը «Ռոսատոմ Սերվիս» ԲԸ-ն և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն կդիտարկեն ճառագայթաակտիվ թափոնների անվտանգ կառավարման ուղղությամբ նախագծերի բոլոր ասպեկտների մանրամասն վերլուծության նպատակով (շահագրգռված կազմակերպությունների ներգրավմամբ) աշխատանքային խմբի ստեղծման հնարավորությունը:
2. Մինչև 2025թ. սեպտեմբերի 15-ը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն կտեղեկացնի «Ռոսատոմ Սերվիս» ընկերությանը պահուստային դիզել-գեներատորային էլեկտրակայանի արդիականացման նախագծի իրականացման համար «Կոլոմենսկի զավոդ» ընկերության սարքավորումներն օգտագործելու պատրաստականության վերաբերյալ:
3. Մինչև 2025թ. օգոստոսի 15-ը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն կդիտարկի ՇԺԵ-2-ի շրջանակներում մշակվող փաստաթղթերի անկախ փորձաքննության (վերլուծության և գնահատման) իրականացման համար «ՄՌԱ ԳՏԿ» ԴԲՀ (ՓԲՄ “НТЦ ЯРБ”) ներգրավման

պայմանագիր կնքելու նպատակահարմարությունը (առանց Շրջանակային պայմանագրի սահմանային արժեքի ավելացման):

4. Մինչև 2025թ. սեպտեմբերի 30-ը «Ռոսատոմ Սերվիս» ԲԸ-ն «ՄՌԱ ԳՏԿ» ԴԲՀ-ի ներգրավմամբ կպատրաստի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի համաձայնեցմանը կներկայացնի 4-րդ կետի համաձայն ծառայությունների մատուցման տեխնիկական առաջադրանք (3-րդ կետի վերաբերյալ դրական որոշման դեպքում):
5. Մինչև 2025թ. սեպտեմբերի 30-ը ՀԱԷԿ» ՓԲԸ-ն և «Ռոսատոմ Սերվիս» ԲԸ-ն կիրականացնեն ՇԺԵ-2-ի աշխատանքների ժամանակացույցների սինքրոնացում (համաժամանակացում), և ՀՀ Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե կներկայացվի տեղեկատվություն՝ ՀԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի ՇԺԵ-2 ակտուալիզացված ծրագրին աշխատանքների ժամանակացույցների համապատասխանության վերաբերյալ:

Կոմիտեի նիստի արդյունքների հիման վրա կազմվեց և ստորագրվեց համապատասխան արձանագրություն (Արձանագրություն՝ Հայկական ատոմային էլեկտրակայանի թիվ 2 էներգաբլոկի շահագործման ժամկետի կրկնակի երկարացման նախագծի կոորդինացման և իրականացման վերահսկման համատեղ կոորդինացիոն կոմիտեի 3-րդ նիստի վերաբերյալ):

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

04.08.2025թ.